

ՄՈՒՋԱՔԵՐ-ԷՂԴԻՆ ԾԱՅԻ ՄԱՅԸ

Վաղուց էին շրջում լուրեր Իրանի պետի անյուսալի հիւանդութեան մասին. և պարսիկներից յետոյ ոչ ոք այնքան հետաքրքրութեամբ չի հետեւել Շահի առողջութեան լուրին, քան Հայոց ազգը: Եւ այս շատ հասկանալի է. Վեհապետի գահ բարձրանալու օրից նա առանձին խնամք է ցոյց տուել Հայոց ազգի այն մնացորդին, որ Նորա բարձր հովանաւորութեան տակն է եղել: Քաջալերել է Հայոց դպրոցները, խրախուսել ամէն մի յառաջադիմական քայլ. թատրոնի բարեգործական ընկերութիւն, եկեղեցի Նորա հովանաւորութիւնն են վայելել:

Յիշենք արդեօք այն սրտազին բարեկամութիւնը, որ ցոյց էր տալիս դէպի Էջմիածնի Գահակալը և այն բարեկամական հաւաստիքը, որ առիթը ներկայացրած ժամանակ չէր զլացել: Անձամբ այցելեց Էջմիածինը, 1897-ի աշնանը երբ վերադառնում էր Եւրոպայից: Իսկ Նորա մարդասիրութեան և բարեացակամութեան ամենամեծ ապացոյցը՝ այս վերջին երկու տարուայ զրացիասպան կռիւների ժամանակ կատարեալ անաչառ և աշալուրջ վերաբերմունքն էր:

Այնքան լարուած ու դրսի ու ներսի զրգռումներին նա անյողողող մնաց և միայն Մեշեթի խիստ պատժով մի անգամ ընդ միշտ վերջ տուեց սպանութեանց ու կոտորածներին, որին այնքան սովոր էին Պարսկաստանի ցեղերից շատերը:

Եւ ինչ զարմանք, եթէ կովկասի բոլոր հայաշատ կետրոններում հայերը հոգեհանգիստներով և ցաւակցական հեռագիրներով ցոյց են տալիս այն յարգանքը, որ տաժում էին դէպի Շահ-շահը և վկայում են հանդուցեալի ճշմարիտ մարդասէր հոգին:

Որքա՞ն քիչ բան է հարկաւոր ժողովրդի անկեղծ սէրը զրաւելու համար և որքա՞ն քչերն են այս պատուին արժանանում: